ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1

«ՊԳԿՎ-ԳՀԾՁԲ-2018/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

18.12.2017թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝

Վարչության աշխատակազմի ղեկավար Վ. Հարությունյան:

Հանձնաժողովի անդամներ՝

Վարչության տնտեսական բաժնի պետ Ռ. Արշակյան,
Վարչության պետական գույքի գրանցման և հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Սահակյան,
Վարչության պետական գույքի գրանցման և հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ Վ. Ասատրյան,
Վարչության պետական գույքի գրանցման և հաշվառման բաժնի առաջատար մասնագետ Գ. Դավթյան:

Հանձնաժողովի քարտուղար՝
Վարչության աշխատակազմի հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության գնումների բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Եղիազարյան:

Նիստի ընթացքում «ՊԳԿՎ-ԳՀԾՁԲ-2018/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին պատասխանատու ստորաբաժանման հայտը:

Հանձնաժողովի անդամների կողմից որոշվեց.

1. Հաստատել «ՊԳԿՎ-ԳՀԾՁԲ-2018/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի տեքստը (կցվում է):
2. Հաջորդ նիստն անցկացնել www.armeps.am կայքով սահմանված վերջնաժամկետին:

Հանձնաժողովի նախագահ՝	**Վ. Հարությունյան**	.....
Հանձնաժողովի անդամներ՝	**Ռ. Արշակյան**	.....
	Ա. Սահակյան	.....
	Վ. Ասատրյան	.....
	Գ. Դավթյան	.....
Քարտուղար՝	**Ա. Եղիազարյան**	.....

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՊԳԿՎ-ԳՀԾՁԲ-2018/1» ծածկագրով ԳՀ
ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

26.12.2017թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝
Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)
Վարչության աշխատակազմի ղեկավար՝ Վ. Հարությունյան:
Անդամներ՝
Գնման Պատասխանատու/Բացման աշխատակազմ(ԳՊ/ԲԱ)
Վարչության տնտեսական բաժնի պետ Ռ. Արշակյան,
Վարչության պետական գույքի գրանցման և հաշվառման բաժնի առաջատար մասնագետ Գ. Դավթյան:
Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ(ԳՊ/ԳԱ)
Վարչության պետական գույքի գրանցման և հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Սահակյան,
Վարչության պետական գույքի գրանցման և հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ Վ.Ասատրյան:
Հանձնաժողովի քարտուղար՝
Գնման Պատասխանատու/Մրցույթի Համակարգող(ԳՊ/ՄՀմ)
Վարչության աշխատակազմի հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության գնումների բաժնի առաջին կարգի մասնագետ՝ Ա. Եղիազարյան:

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված՝
-հողամասերի հատակագծերի կազմում և տրամադրում- 4500000 ՀՀ դրամ,
-շենքերի, շինությունների հատակագծերի կազմում և տրամադրում- 4980000 ՀՀ դրամ:

1.Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

«ՊԳԿՎ-ԳՀԾՁԲ-2018/1» ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի հայտերը էլեկտրոնային www.armeps.am համակարգի միջոցով բացվել են ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության շենքում ք.Երևան, Տիգրան Մեծ 4 հասցեում, դեկտեմբերի 26-ին ժամը 10:00-ին:

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/ և գտնվելու վայրերի հասցեները.**

N/N	Մասնակցի անվանումը	Կազմակերպության հասցեն
1	«Ստեփրիկ» ՍՊԸ	ՀՀ ք. Երևան, Գաջեգործների 3-րդ փ., տուն 15
2	«Է. Ապրեսյան» ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր Թամանցիների 14
3	«Վահագն Սարգսյան» Ա/Ձ	ՀՀ, ք. Երևան, Բաշինջաղյան 1փ, 8շ, 32բն
4	«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Մայիսի 9-ի 51/1-42

3. Տվյալներ՝ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 «Ստեփրիկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բացվել է, քանի որ ընդունվել էր համակարգի կողմից և ճանաչվել անցողիկ:

3.2 «Է. Ապրեսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բացվել է, քանի որ ընդունվել էր համակարգի կողմից և ճանաչվել անցողիկ

3.3 «Վահագն Սարգսյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը բացվել է, քանի որ ընդունվել էր համակարգի կողմից և ճանաչվել անցողիկ

3.4 «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բացվել է, քանի որ ընդունվել էր համակարգի կողմից և ճանաչվել անցողիկ

4.Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

4.1 **«ՊԳԿՎ-ԳՀԾՁԲ-2018/1»** ծածկագրով ԳՀ ընթացակարգի շրջանակներում հայտեր ներկայացրած մասնակիցները գրանցված են ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի www.cadastre.am կայքում զետեղված՝ ՀՀ տարածքում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեության տեսակներով զբաղվելու համար հաշվառված անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձանց անվանացանկում:

4.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ՝

- Ա/Ձ Վահագն Սարգսյանի, որի հայտի ապահովման մեջ և հայտի ապահովման մաս կազմող վճարման պահանջագրում Ընկերությանը սպասարկող/վճարողի բանկի անվանումը նշված է «Արդշինինվեստբանկ» գլխավոր գրասենյակ, մինչդեռ բանկը կոչվում է «Արդշինբանկ» ՓԲԸ:
- «Ստեփրիկ» ՍՊԸ-ի, որի հայտի ապահովման մեջ Ընկերության տնօրենի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները հատվածում նշված է Ընկերության տնօրենի անունը, ազգանունը, անձնագրի սերիան և համարը՝ առանց նշելու, թե անձնագիրը երբ և ում կողմից է տրամադրվել, իսկ հայտի ապահովման մաս կազմող վճարման պահանջագրի 7-րդ տողում ՍՊԸ հանդիսացող ընկերությունը լրացրել է նաև Վճարողի ՀԾՀ-ն:

5. Մասնակիցների առաջարկած գները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Գնային առաջարկ					
		Չափաբաժին 1 Հողամասերի հատակագծերի կազմում և տրամադրում			**Չափաբաժին 2** Շենքերի, շինությունների հատակագծերի կազմում և տրամադրում		
		Արժեք	ԱԱՀ	Առաջարկված գին	Արժեք	ԱԱՀ	Առաջարկված գին
1	*2*	*3*	*4*	*5*			
1	«Ստեփրիկ» ՍՊԸ	3900000	-	3900000	4920000	-	4920000
2	«Է. Ապրեսյան» ՍՊԸ	2990000	-	2990000	4700000	-	4700000
3	«Վահագն Սարգսյան» Ա/Ձ				2760000	-	2760000
4	«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ	2980000	-	2980000	4480000	-	4480000

6.Տվյալներ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
Հարցումներ չեն ստացվել:

7. Հանձնաժողովը որոշեց՝

1) Կասեցնել «ՊԳԿՎ-ԳՀԾՁԲ-2018/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստը և պաշտոնական պարզաբանում ստանալու համար դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն:
2) Բացման նիստը շարունակել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից պաշտոնական պարզաբանում ստանալուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները

Հանձնաժողովի նախագահ՝	**Վ. Հարությունյան**	.....
Հանձնաժողովի անդամներ՝	**Ռ. Արշակյան**	.....
	Ա. Սահակյան	.....
	Վ. Ասատրյան	.....
	Գ. Դավթյան	.....
Քարտուղար՝	**Ա. Եղիազարյան**	.....

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/1

«ՊԳԿՎ-ԳՀԾՁԲ-2018/1» ծածկագրով ԳՀ
ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

28.12.2017թ.
ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝
Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)
Վարչության աշխատակազմի ղեկավար՝ Վ. Հարությունյան:
Անդամներ՝
Գնման Պատասխանատու/Բացման աշխատակազմ(ԳՊ/ԲԱ)
Վարչության տնտեսական բաժնի պետ Ռ. Արշակյան,
Վարչության պետական գույքի գրանցման և հաշվառման բաժնի առաջատար մասնագետ Գ. Դավթյան:
Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ(ԳՊ/ԳԱ)
Վարչության պետական գույքի գրանցման և հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Սահակյան,
Վարչության պետական գույքի գրանցման և հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ Վ.Ասատրյան:
Հանձնաժողովի քարտուղար՝
Գնման Պատասխանատու/Մրցույթի Համակարգող(ԳՊ/ՄՀմ)
Վարչության աշխատակազմի հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության գնումների բաժնի առաջին կարգի մասնագետ՝ Ա. Եղիազարյան:

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց 26.12.2017թ. կասեցված նիստը շարունակելու մասին:

Նիստի ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված պատասխանում հղում է կատարվել օրենքին, ըստ որի մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով և գնահատող հանձնաժողովը պետք է որոշի, թե արդյոք հայտերում տեղ գտած թերությունները կարող են դիտարկվել որպես հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխանություն, թե ոչ:

Այսպիսով՝ հանձնաժողովի անդամների կողմից քննարկվեց մասնակիցների ներկայացրած հայտերում արձանագրված անհամապատասխանությունների էական լինելու հանգամանքը, ինչի արդյունքում արձանագրվեց.

- ՀՀ-ում գործող բանկերի ցանկում չկա «Արդշինինվեստբանկ» գլխավոր գրասենյակ անունով բանկ, ուստի Ա/Ձ Վահագն Սարգսյանի կողմից ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերի պահանջներին
- «Ստեփրիկ» ՍՊԸ-ի կողմից հայտի ապահովման մաս կազմող վճարման պահանջագրում ՀԾՀ-ի լրացումը հանդիսանում է լրացուցիչ տեղեկատվություն, իսկ անձնագրային տվյալների հատվածում նշված Ընկերության տնօրենի անունը, ազգանունը, անձնագրի սերիան և համարը, ապահովում են մասնակցի անձնագրային տվյալների առկայությունը, ուստի հայտի ապահովումը համապատասխանում է հրավերի պահանջներին:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը Ա/Ձ Վահագն Սարգսյանի հայտը գնահատել անբավարար և մերժել,
2. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝

ա) «Մագիստրալ նախագիծ», «Ստեփրիկ» և «Է. Ապրեսյան» ՍՊԸ-ների ներկայացված հայտերը գնահատել բավարար,

բ) 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին, երկրորդ տեղ՝ «Է. Ապրեսյան» ՍՊԸ-ին և երրորդ տեղ՝ «Ստեփրիկ» ՍՊԸ-ին,

2-րդ չափաբաժնի մասով՝ առաջին տեղ «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին, երկրորդ տեղ՝ «Է. Ապրեսյան» ՍՊԸ-ին և երրորդ տեղ՝ «Ստեփրիկ» ՍՊԸ-ին,

3. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

4) Հաջորդ նիստը գումարել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվությունը և գնահատման թերթիկները հանձնաժողովի անդամներին տրամադրելուն հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները

Հանձնաժողովի նախագահ՝	**Վ. Հարությունյան**	.....
Հանձնաժողովի անդամներ՝	**Ռ. Արշակյան**	.....
	Ա. Սահակյան	.....
	Վ. Ասատրյան	.....
	Գ. Դավթյան	.....
Քարտուղար՝	**Ա. Եղիազարյան**	.....

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 3

«ՊԳԿՎ-ԳՀԾՁԲ-2018/1» ծածկագրով ԳՀ

ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

12.01.2018թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Վարչության աշխատակազմի ղեկավար՝ Վ. Հարությունյան:

Հանձնաժողովի անդամներ՝

Վարչության տնտեսական բաժնի պետ Ռ. Արշակյան,
Վարչության պետական գույքի գրանցման և հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Սահակյան,
Վարչության պետական գույքի գրանցման և հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ Վ. Ասատրյան,
Վարչության պետական գույքի գրանցման և հաշվառման բաժնի առաջատար մասնագետ Գ. Դավթյան:

Հանձնաժողովի քարտուղար՝

Վարչության աշխատակազմի հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության գնումների բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Եղիազարյան:

Նիստի ընթացքում Հանձնաժողովի անդամների կողմից քննարկվեց ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված տեղեկատվությունը, որի համաձայն «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ, ուստի Ընկերության կողմից ներկայացված հայտարարությունը որակվեց իրականությանը համապատասխանող: Գնահատման արդյունքները արտացոլվեցին գնահատման թերթիկներում:

Հանձնաժողովը որոշեց՝

1) Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասը՝ ընտրված մասնակից ճանաչել «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին

2) Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանել 5 օրացուցային օր:

3) Հաստատել ԳՀ ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

4) Հրավերով սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները

Հանձնաժողովի նախագահ՝	**Վ. Հարությունյան**	.....
Հանձնաժողովի անդամներ՝	**Ռ. Արշակյան**	.....
	Ա. Սահակյան	.....
	Վ. Ասատրյան	.....
	Գ. Դավթյան	.....
Քարտուղար՝	**Ա. Եղիազարյան**	.....

Հաստատում եմ՝

Վ.Հարությունյան

(ստորագրություն)

«29» 01 2018 թ.

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՊԳԿՎ-ԳՀԾՁԲ-2018/1» ծածկագրով գնման ընթացակարգի

1.Պատվիրատուի անվանումը, գտնվելու վայրը.
ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչություն, ք. Երևան, Տիգրան Մեծ 4

2.Գնման անհրաժեշտությունը և գնման ձևի ընտրության հիմնավորումը.
Շենքերի, շինությունների և հողամասերի հատակագծերի կազմման և տրամադրման ծառայությունների ձեռքբերումն անհրաժեշտ էր ՀՀ ԿԱ ՊԳԿՎ գործունեության բնականոն ընթացքն ապահովելու համար: Գնումը կատարվել է ԳՀ ընթացակարգով՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին կետի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 23-րդ կետի 2-րդ ենթակետը:

3.Հրավերը և դրանում կատարված փոփոխությունները.
Հրավերը հաստատվել է 18.12.2017թ. կայացած նիստում՝ գնահատող հանձնաժողովի որոշմամբ: Հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

4.Գնման վերաբերյալ ստացված հարցումները և ներկայացված պարզաբանումները.
Հարցումներ չեն ստացվել

5. Հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գտնվելու կամ բնակության վայրը, կապի միջոցները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը	Կապի միջոցներ
1	«Ստեփրիկ» ՍՊԸ	ՀՀ ք. Երևան, Գաջեգործների 3-րդ փ., տուն 15	steprik@yahoo.com
2	«Է. Ապրեսյան» ՍՊԸ	ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր Թամանցիների 14	apresyan.expert@mail.ru
3	«Վահագն Սարգսյան» Ա/Ձ	ՀՀ, ք. Երևան, Բաշինջաղյան 1փ, 8շ, 32բն	vahagnsargsyan@bk.ru
4	«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Մայիսի 9-ի 51/1-42	magistral.nakhagits@yahoo.com

6. Հայտերով ներկայացված գները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Գնային առաջարկ					
		Չափաբաժին 1 Հողամասերի հատակագծերի կազմում և տրամադրում			**Չափաբաժին 2** Շենքերի, շինությունների հատակագծերի կազմում և տրամադրում		
		Արժեք	ԱԱՀ	Առաջարկված գին	Արժեք	ԱԱՀ	Առաջարկված գին
1	*2*	*3*	*4*	*5*			
1	«Ստեփրիկ» ՍՊԸ	3900000	-	3900000	4920000	-	4920000
2	«Է. Ապրեսյան» ՍՊԸ	2990000	-	2990000	4700000	-	4700000
3	«Վահագն Սարգսյան» Ա/Ձ				2760000	-	2760000
4	«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ	2980000	-	2980000	4480000	-	4480000

7. Հայտերի գնահատման կարգը և դրանց գնահատման արդյունքները.

Ընտրված մասնակիցը որոշվել է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Ընտրված մասնակից է ճանաչվել «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն:

8. Հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը.

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը՝ «Վահագն Սարգսյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է, քանի որ հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

9. Պայմանագիր, իսկ գնման գործընթացի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.

Պայմանագիրը կնքվել է «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի հետ, 25.01.2018թ., **«ՊԳԿՎ-ԳՀԾՁԲ-2018/1»**, գինը կազմում է 7460000 ՀՀ դրամ, կատարման վերջնաժամկետն է 20.12.2018թ.:

10. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ հայտնաբերելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիրը.

Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

11. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները.

Գնման գործընթացի վերաբերյալ բողոքներ չեն ներկայացվել: